ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 11 » հունվարի 2022 թվականի N: 11-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 141-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի մայիսի 18-ի «Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի դեկտեմբերի 5-ի N:326-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N:141-Ա որոշման (Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետում «աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սամվել Գրիգորյանին» բառերը փոխարինել «տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Արաքսյա Կիրակոսյանին» բառերով,

2) Որոշման 3-րդ կետում «աշխատակազմի ղեկավար Խաչատուր Պողոսյանին» բառերը փոխարինել «գլխավոր քարտուղար Արսեն Աբրահամյանին» բառերով:

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է